«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Ժամանակակից դասին ներկայացվող արդի պահանջների վերլուծություն |
| ԱՌԱՐԿԱ | Ֆիզկուլտուրա |
| ՀԵՂԻՆԱԿ | Հայկ Առաքելյան |
| ՄԱՐԶ | Լոռի |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Կաթնառատի միջնակարգ դպրոց |
| ՂԵԿԱՎԱՐ | մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր, Ա.Մ. Ծատուրյան |

Ստեփանավան 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____3
2. ԳԼՈՒԽ 1 ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ _____4-6
3. ԳԼՈՒԽ 2 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ _____7-9
4. ԳԼՈՒԽ 3 ՈՒՍՈՒՑՉԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԻՆ _____10-12
5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____13
6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____14

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի կողմից դասապրոցեսին նախապատրաստվելն արդի ժամանակաշրջանում պահանջում է նորագույն մեթոդական հնարքների առանձնահատուկ մոտեցումներ: Դասապրոցեսի ժամանակ ուսուցչի կողմից անհրաժեշտ դիդակտիկ նյութերի, համակարգչային տեխնոլոգիաների ու գիտա-տեխնիկական առաջընթացի նորամուծությունների կիրառումը նպաստում է սովորողների մոտ անհրաժեշտ հնարքների և կարողությունների ձևավորմանը:

Կատարված հետազոտության նպատակն է ցույց տալ այն նորարական տեխնոլոգիաներն ու մեթոդները, որով պետք է ուսուցիչը նախապատրաստվի դասին: ՈՒսուցչի կողմից աշակերտներին ավանդաբար մատուցվող տեսական գիտելիքների մեթոդաբանությունն առաջացնում է անտարբերություն, ուստի անհաժեշտ է արդի պահանջներին համապատասխան նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով մատուցել դասը:

Ժամանակակից ուսուցման գործընթացի նպատակը պետք է լինի աշակերտի մոտ ձևավորել արժանապատիվ քաղաքացուն բնորոշ հատկանիշներ և արժեքներ: Յուրաքանչյուր դասին ուսուցիչը պետք է հետևողականորեն աշխատի այդ արժեքները աշակերտներին հաղորդելու և զարգացնելու ուղղությամբ: ՈՒսուցիչը սովորողների մոտ պետք է հետևողականորեն զարգացնի հետաքրքրասիրությունն ու բացառի անտարբերությունը: Աշակերտների մոտ պետք է ձևավորվեն բարձր բարոյական արժեքներ, նրանք պետք է կարողանան հոգ տանել իրենց ընտանիքի, դպրոցի, համայնքի, իրենց ազգի և հասարակության կյանքի որակի համար:

Հետազոտության նպատակն է դասապրոցեսի, աշակերտի դաստիարակության և դասապատրաստման արդյունավետության բարաձրացման համար վեր հանել և ներկայացնել այնպիսի նորարական մեթոդաբանություն, որը թույլ կտա աշակերտների մոտ ձևավորել սեփական գործողությունների և վարքագծի նկատմամբ պատասխանատվության զգացում: Հարգանք պետության, պետական իշխանության մարմինների և պետության խորհրդանիշերի հանդեպ: Կարողանա մտածել ազատ և չկաղապարված, ունենա արդարության զգացում և արդար գործելակերպ:

# ԳԼՈՒԽ I

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ներկայումս մեծ կարևորություն են ձեռք բերել լավ, որակյալ, արդյունավետ դաս բառերը: Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է այդպիսի դաս անց կացնել: Բայց միշտ չէ, որ այն հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը հեշտ չէ նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է սոցիալական, կրթական, դաստիարակչական և այլ գործոններից:

Որակյալ դասի գլխավոր հատկանիշը և ընդհանրապես դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը՝ գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը մանկավարժական գիտության ժամանակակից վիճակին, առաջավոր փորձին, ուսումնադաստիարակչական պրոցեսի օրինաչափություններին:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է հանդիսանում ուսումնական նպատակի հստակությունը, կրթական, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը անցկացվող դասի ժամանակ: Մեծ նշանակություն ունի ուսուցչի կողմից յուրաքանչյուր դասի գլխավոր մտքի, էության որոշումն այն ձևով, որ դա հասանելի լինի և յուրացվի դասարանի բոլոր աշակերտների կողմից:

Որակյալ դասը բնութագրվում է ուսուցչի և աշակերտների համատեղ ու ստեղծագործական սերտ փոխներգործությամբ, որի հիման վրա էլ կարելի է հասնել գլխավոր խնդրի լուծմանը՝ կրթել, դաստիարակել և զարգացնել:[1]

Ժամանակակից զարգացած երկրների հանրակրթական կազմակերպման հարցերը համեմատելիս մի կողմից՝ նկատում ենք հարուստ բազմազանություն, իսկ մյուս կողմից նկատում ենք բավականին շատ ընդհանրություններ: Հաճախ բազմազանության տպավորություն են ստեղծում ոչ էական տարբերությունները: Օրինակ՝ մի երկրում հանրակրթությունը եռաստիճան է, մյուսում՝ քառաստիճան, կամ մի երկրում հանրակրթությունը տասնամյա է, մեկ այլ երկրում՝ տասներկուամյա: Կան հանրակրթական առարկաների ցանկի տարբերություններ: Սրանք, իսկապես, էական չեն և պատահական չէ, որ ընդհանուր կրթական տարածության ձևավորման նպատակով

տարբեր երկրների կրթական համակարգերի փոխհամաձայնեցման խնդիրներում նմանատիպ հարցերին առանձնակի նշանակություն չի տրվում:

Ուշագրավ է, օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջ.Բուշի կրթության բարեփոխման նախագիծը, որը կոչվում է «Հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար»: Մեջբերենք այդ նախագծի հենց սկզբում տեղ գտած մի հատկանշական հատված. «Սակայն Ամերիկայում շատ երեխաներ դրված են անհավասար պայմաններում՝ իջեցված ցածր պահանջների, անգրագիտության ու սեփական ուժերի նկատմամբ անվստահության պատճառներով»: Այնուհետև՝ «Այդպես չպետք է լինի: Եթե մեր երկիրը չկարողանա կրթություն տալ յուրաքանչյուր երեխային, մեզ կհետապնդեն անհաջողություններն այլ բազմաթիվ ոլորտներում»: Ուշադրություն դարձնենք. Բարձրացված է յուրաքանչյուր երեխայի կրթական մակարդակի հարցը: Ընդ որում՝ առանձնացվում է անհավասար պայմաններում գտնվելու պատճառներից մեկը՝ որոշ երեխաների նկատմամբ ցածր են կրթական պահանջները և նրանք իրենց ուժերի վրա վստահ չեն: Այսինքն՝ նրանք ի վիճակի են հասնելու բարձր կրթական արդյունքների, սակայն և' մանկավարժներն են նրանց հնարավորությունների նկատմամբ թերահավատ, և' իրենք՝ երեխաներն են կասկածում իրենց կարողությունների վրա: Հենց սա է գնահատվում որպես անթույլատրելի երևույթ, հենց սրանով էլ արհեստականորեն սահմանափակվում են երեխաների հնարավորությունները:

Գրեթե բոլոր երկրներում հատկապես կարևորվում է պետական հանրակրթական չափորոշիչների մշակման հարցը: Սա հենց այնպես չէ, կրթության համակարգի ապակենտրոնացման և ժողովրդավարացման պայմաններում առաջ են գալիս երկրի կրթական տարածության ամբողջականության ապահովման և անհրաժեշտ հանրային կրթական մակարդակի ապահովման երաշխիքի խնդիրներ: Մասնակիորեն այս խնդիրները լուծվում են չափորոշիչների որոշման միջոցով: Չափորոշիչները հիմք են հանդիսանում նաև միջազգային կրթական տարածությունների ստեղծման ու միջպետական հարաբերությունների կարգավորման խնդիրների լուծման համար:[1]

Միջին դպրոցն ավարտողը պետք է ունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները՝ վերլուծել, համեմատել, ընդհանրացնել, վերացարկել և համադրել

հասարակական կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող իրադարձություններ, երևույթներ և փաստեր, գնահատել անձի և հասարակության վերաբերյալ տարբեր տեսակետներ և ճիշտ կողմնորոշվել դրանց հիմնավորվածության հարցում, ազգային շահերի տեսանկյունից վերլուծել և գնահատել Հայաստանի ազգային, տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի ուղղվածությունը, տարբեր սկզբնաղբյուրներից տեղեկատվություն ընտրել, վերլուծել, եզրակացություններ անել, կիրառել հաղորդակցվելու համարժեք ձևեր ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ տեսակներում, ձևավորել փոխադարձ հարգանքի և փոխօգնության հարաբերություններ մարդկանց հետ առօրյա շփումներում, մասնակցել խմբային գործունեությանը տարբեր դերերով (առաջնորդ, մասնակից, դիտորդ), դպրոցում, ընկերական շրջապատում, սպորտային խաղերի ժամանակ և այլ իրավիճակներում հետևել ազնիվ մրցակցության սկզբունքին, ունենալ հետազոտական գործունեության տարրական կարողություններ, բերել ինքնուրույն փաստարկներ, ապացույցներ և հիմնավորումներ սեփական տեսակետ արտահայտելու համար, փնտրել, գտնել և կիրառել ինքնուրույն լուծումներ սոցիալական և հոգեբանական տարբեր իրավիճակներում, դրսևորել տրամաբանական և ստեղծագործական ճկուն մտածելակերպ:

Ժամանակակից դասերին անհնար է պատկերացնել առանց համակարգչային տարբեր տեխնոլոգիաների, որոնք օգնում են ինտերակտիվ խնդիրների կիրառման գործին: Ուսուցիչը և աշակերտը հաջողությամբ ինտերակտիվ աշխատանք են կատարում, որոնք կիրառվում են ինչպես նոր նյութի դասավանդման ժամանակ, այնպես էլ անցած նյութի ամփոփման ժամանակ: Power Point ծրագիրը հնարավոր է դարձնում ինչպես տեքստերի, այնպես էլ տարբեր դիագրամաների, սխեմատիկ քարտեզների, տեսանկարահանված նյութերի, սլայդների ցուցադրումը: Իհարկե, միանշանակ ասել, թե դրանց միջոցով ապահովվում է դասի գիտականության առաջադրվող պահանջները, սխալ կլինի, բայց չպետք է մոռանալ, որ այսօր գիտական գրականության էլեկտրոնային տարբերակն ավելի հասանելի և մատչելի է սովորողների համար: Նրանք ավելի նախընտրում են համակարգչից կարդալ անհրաժեշտ ինֆորմացիան, քան այցելել գրադարաններ:[8]

## ԳԼՈՒԽ II

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ժամանակակից ուսուցման գործընթացի նպատակը պետք է լինի ոչ միայն տեսական գիտելիքների հաղորդումը, այլև սովորողների մոտ հմտությունների ընդունակությունների զարգացումը, որոնք իրական նշանակությունն ունեն նրանց լիարժեք քաղաքացի դաստիարակելու համար: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր սովորողի մոտ ձևավորվի արժանապատիվ քաղաքացուն բնորոշ հատկանիշներ և արժեքներ: Յուրաքանչյուր դասին ուսուցիչը պետք է հետևողականորեն աշխատի այդ արժեքները աշակերտներին հաղորդելու և զարգացնելու ուղղությամբ:

Ուսուցիչն աշակերտներին պետք է սովորեցնի քննադատաբար մտածելու հմտություն: Այս հմտությունն աշակերտներին հնարավորություն է տալիս հասկանալու այն ամենի իմաստն ու նշանակությունը, ինչն իրենք կարդում, լսում, մտածում և ինչին հավատում են: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել և զարգացնել աշակերտի մոտ անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու հմտության վրա: Արևմուտքի երկրներում մեծ ուշադրություն է դարձվում սովորողների մոտ կառավարման հմտությունների, դասագրքով աշխատելու ունակությունների, բառարաններից և համակարգչային տեխնիկայից օգտվելու հնարավորությունների վրա:[2]

Արդյունավետության և դաստիարակչականության տեսանկյուններից խորհուրդ է տրվում դասերի ժամանակ կիրառել համագործակցային, փոխներգործուն (ինտերակտիվ), կառուցողական, քննադատական մտածողության և պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիաներ:[6]

Վերջին շրջանում տարբեր ձևով, բայց հաճախակի է հնչում այն կարծիքը, որ ժամանակակից դպրոցը պետք է դառնա բոլոր ուսումնադաստիարակչական ազդեցությունների կենտրոն, իսկ ուսուցումը պետք է տարվի «մարդակենտրոն» սկզբունքին համապատասխան: Դա նշանակում է, որ ուսուցման նպատակը չպետք է սահմանափակվի միայն գիտելիքների հաղորդմամբ, այլև բազմակողմանի զարգացած և, որ ամենակարևորն է՝ ժամանակակից կյանքի պահանջմունքներին համապատասխանող

անհատի ձևավորմամբ: Դպրոցի գաղափարական և կազմակերպական հիմքում պետք է ընկած լինեն սովորողների հետաքրքրություններն ու իրավունքները:[6]

Ներկայիս դպրոցում կարևորվում է ոչ միայն սովորողների ինտելեկտուալ, այլև բարոյական և գեղագիտական դաստիարակությունը, ինչը պայմանավորված է հումանիզմի, արժեհամակարգի դերի կարևորման հետ: Յու.Բորևի, Ա.Եգորովի, Մ.Կագանի, Մ.Լիվշիցի, Վ.Սելիվանովի աշխատություններում վերլուծության են ենթարկված գեղագիտական դաստիարակության մեթոդները, ձևերը և սկզբունքները, որոնց հիման վրա առանձնացվում են գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները:[7]

Կրթական բարեփոխումների իրականացման պայմաններում հանրակրթական դպրոցների կողքին ձևավորվում են մասնագիտացված, որոշ՝ հումանիտար կամ այլ հոսքի, առարկաների գծով խորացված ուսումնական հաստատություններ, որոնք հնարավորություն են տալիս կրթական ծրագրերում ներառել հասարակության պահանջմունքների բավարարմանն ուղղված որոշ առարկաներ, սովորողների դաստիարակության գործում ուշադրություն դարձնել նրանց անհատական ունակությունների զարգացման վրա: Մ.Գուրյանովան դաստիարակության գործում կարևորում է գյուղական դպրոցների դերը, նշելով, որ դրանք առաջին հերթին ինքնատիպ սոցիալ-մշակութային երևույթներ, ինստիտուտներ են, որոնք պատմական ավանդույթային համապատասխան շարունակում են գործել՝ դաստիարակության և կրթության հիմնական գործառույթներից բացի իրականացնում են սոցիալ-տնտեսական, սոցիալ-մանկավարժական գործառույթներ: Գյուղական դպրոցների դաստիարակչական գործառույթին անդրադարձել են Կ.Ուշինսկին, Ն.Կորֆան և ուրիշներ:

Անհրաժեշտ է, որ ուսուցիչը չսահմանափակվի միայն նյութը շարադրելով, այլ սովորողների ուշադրությունը դարձնի դասի բարոյական, գեղագիտական, ինտելեկտուալ և այլ դաստիարակչական նշանակություն ունեցող կողմերի վրա, խրախուսի հերոսությունը, հայրենասիրություն ու անկաշառելիությունը, պարսավի դավաճանությունը, մատնությունը և այլն: Ն. Կ. Կրուպսկայայի կարծիքով սովորողների մոտ համապատասխան բարոյական նորմեր ձևավորելու համար անհրաժեշտ է նրանց մոտ զարգացնել կոլեկտիվիզմի զգացումը, ինչն այսօր իրականացվում է բազմաթիվ

ուսուցման մեթոդների (խմբային, համագործակցային) միջոցով: Կոլեկտիվում սովորողի բարենպաստ հուզական վիճակը նրա բարոյական զարգացման գրավականն է: Սովորողների բարոյական դաստիարակությունը հնարավոր է միայն գիտականորեն հիմնավորված կրթական ծրագրերի միջոցով: Ներկայումս դպրոցներում գործում են աշակերտական խորհուրդներ, պարբերաբար կազմակերպվում են դպրոցական ընտրություններ, որոնք էական նշանակություն ունեն անձի դաստիարակության համար, քանի որ «որոշակի պաշտոնում ընտրված» սովորողի մոտ դաստիարակվում է պատասխանատվության, պարտքի զգացում:[7]

Նոր սերնդի ուսուցման ու դաստիարակության հիմնախնդիրները բոլոր ժամանակներում և ամենուրեք եղել ու մնում են մարդկային հասարակության գլխավոր հոգսերից: Գործնականորեն դժվար է առանձնացնել որևէ խոշոր մտածողի, որն իր աշխատություններում այսպես թե այնպես շոշափած չլինի այդ հարցը:

XX դարի կեսերին ընդանում էին լուրջ բանավեճեր մանկավարժագիտության «հոգեբանականացման» (պսիխոլոգիզմի) հաղթահարման վերաբերյալ: Հենց այդ փուլում էր, որ Վիտալի Դիաչենկոն հանդես եկավ հանուն ուսուցման կազմակերպման դրա պատմական զարգացման օբյեկտիվ օրենքներն ուսումնասիրող հատուկ գիտության՝ դիդակտիկայի ստեղծման, միաժամանակ մշակելով այդ գիտության հիմունքները:

Աշակերտների դաստիարակության ժամանակակից խնդիրներից և պահանջներից մեկն էլ հանդիսանում է «Ուսուցման խնդիր» հասկացությունը: Ուսումնական խնդիրը կազմվում է այնպես, որ նրա լուծումը աշակերտներից պահանջի մտավոր կամ առարկայական փորձարկման ենթարկել յուրացվող նյութը: Հենց ուսումնական խնդրի հանձնարարության կատարման ընթացքում էլ աշակերտները հարկադրված առնչվում են առարկայի ներքինի հետ:[6]

## ԳԼՈՒԽ III

## ՈՒՍՈՒՑՉԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԻՆ

Մեր հասարակության զարգացման ներկա փուլում դասավանդման մեջ հանդես են եկել նոր մոտեցումներ, փոխվել է նաև սովորողների կրթությանը ներկայացվող պահանջների մակարդակը: Ստեղծվում են այլընտրանքային ծրագրեր և դասագրքեր, որոնք ուսուցչի աշխատանքներում առաջացնում են որոշակի դժվարություններ: Նման պայմաններում ուսուցչից պահանջվում է առանձնակի ուշադրությամբ նախապատրաստվել յուրաքանչյուր դասին, առաջնորդվել տվյալ բաժնի համար նախատեսված մեթոդական պահանջներով, առկա ուսումնամեթոդական գրականությամբ, ինչպես նաև օգտագործել դպրոցի մեթոդիստների փորձը:

Դասին ուսուցչի նախապատրաստման հիմքը կազմում է առարկայի ծրագրի խոր վերլուծությունը և դպրոցական դասագրքի խոր իմացությունը, ինչպես նաև նախօրոք թեմատիկ պլան կազմելը: ՈՒսուցչի դասին նախապատրաստվելը սկսում է դասի նպատակի սահմանմամբ: Նախապատրաստման այս տարրը, հատկապես երիտասարդ ուսուցիչների մոտ, հաճախ դժվարություններ է առաջացնում: Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս դասերի մեծ մասը, հատկապես երիտասարդ ուսուցիչների մոտ, հարուստ է մեծաքանակ նյութերով, բայց հաճախ դրանք գաղափար չեն պարունակում, և նույնիսկ ամփոփիչ եզրակացություն չի արվում, իսկ երբեմն էլ չի երևում ուսուցչի դիրքորոշումը:

Այնուհետև ուսուցիչն անցնում է խնդիրների ձևակերպմանը, որոնք յուրաքանչյուր դասի համար պետք է կոնկրետ լինեն և բխեն նշված դասարանի աշակերտների հնարավորություններից: Կրթական խնդրում ուսուցիչը բացահայտում է գլխավոր գաղափարը, թեմայի գլխավոր իրադարձությունները, երևույթները, փաստերը՝ այսինքն այն ամենը, որոնք անհրաժեշտ են աշակերտներին՝ հիմնավոր յուրացման համար: Դաստիարակող խնդիրները ձևակերպելու համար ուսուցիչը պետք է իմանա դաստիարակության հարցերին ներկայացվող ընդհանուր պահանջները, որտեղ մեծ ուշադրություն է դարձվում հայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության խնդիրներին, այսինքն այն հարցերին, որոնք այսօր առաջնային են և մեծ հրատապություն ունեն: Առաջնորդվելով դաստիարակությանը ներկայացվող ժամանակակից

պահանջներով, ուսուցիչն առանձնացնում է այն դաստիարակչական խնդիրները, որոնք կարող են իրագործվել ելնելով տվյալ դասի բովանդակությունից և մեթոդիկայից:[3]

Դասի ժամանակ ուսումնասիրվող նյութի բովանդակությունը որոշվում է ծրագրով և դասագրքով: Բայց միևնույն ժամանակ այն չի կրկնօրինակում դասագիրքը: Որպես կանոն ուսուցիչը մշակում է ուսումնասիրվող թեմայի բովանդակության սեփական տարբերակը: Դասի կրթական և դաստիարակչական խնդիրների լուծումն ապահովվում է բարձր գիտական բովանդակությամբ և դրա պատկերավոր-զգացմունքային բացահայտմամբ, այդ պատճառով էլ դասի համար ուսուցիչն ընտրում է համոզիչ փաստեր, փաստաթղթեր, գեղարվեստական գրականությունից հատվածներ:

Դասի ուսուցչի նախապատրաստվելն ավարտվում է դրա պլան-կոնսպեկտ կազմելով: Ընդ որում այն, հատկապես սկսնակ ուսուցիչների համար, մշակվում է շատ մանրամասնորեն և ծավալուն: ՈՒսուցչի նախապատրաստմանը ներկայացվող այս պահանջը հաստատված է պրակտիկայով: Դեռևս ոչ մեկին չի հաջողվել վարպետ դառնալ առանց նախատեսվող դասի կազմակերպման առանձին հատվածների վրա մանրամասն աշխատանքի: Միայն այն ժամանակ, երբ դասի կառուցվածքի շատ տարրեր դառնում են սովորական, կարելի է անցնել կրճատ գրառումների, աստիճանաբար կրճատելով պլանի ծավալը, այն դարձնելով գործողությունների կոնկրետ ծրագիր: Հնչում են տարբեր հակասական տեսակետներ, բայց մի բան պարզ է օգտագործելով պլան-կոնսպեկտը՝ ուսուցիչն իր օրինակով աշակերտներին սովորեցնում է աշխատանքի կազմակերպվածության, պլանով աշխատանքի և նախօրոք պատրաստված կարճ գրառում-թեզիսներով աշխատանքի:

Անհրաժեշտ է դասը կառուցել տրամաբանորեն հստակ ու պարզ, իսկ նյութի շարադրանքը պետք է լինի պատկերավոր-զգացմունքային և աչքի ընկնի համոզիչ հետևություններով ու ընդհանրացումներով: Դասի յուրաքանչյուր փուլ պլանավորելիս անհրաժեշտ է նշել դրա տևողությունը: Դասի ժամանակ պետք է ապահովվի սովորողների ճանաչողական ակտիվ գործունեությունը, ուսուցչի հետ նրանց շփումը և իրագործվի կրթական, դաստիարակչական և զարգացնող խնդիրների համատեղ լուծումը: Դասի հաջողությունը կախված է ոչ միայն ուսուցչի մանրամասն նախապատրաստությունից, այլ

նաև նախատեսվող դասին աշակերտների պատրաստվածության աստիճանից և այն հոգեբանական տրամադրվածությունից, որով նրանք ներկայանում են դասին:[5]

ՈՒսուցիչը պետք է նախապես որոշի դասի տիպը, կազմի դասապլանը: Գոյություն ունեն բազմաթիվ՝ կոմբինացված ընդհանուր տիպի դասեր, դաս-զրույց, պատմվածքի կամ դասախոսության ոճով, հարցման ձևով կազմակերպված դասեր, դաս-էքսկուրսիա և այլն:

Դասի ներածական մասում աշակերտներին հարկ է ներկայացնել, թե տվյալ դասն ուսումնասիրելու արդյունքում ինչ գիտելիքներ և հմտություններ ձեռք կբերեն, այսինքն՝ աշակերտներին հաղորդել դասի նպատակները նրանց համար մատչելի լեզվով: Երբ աշակերտներն ընկալում են, թե ինչու են կատարում տվյալ աշխատանքը, նրանց մասնակցության աստիճանը բարձրանում է: Ուսուցիչը պետք է հստակ իմանա՝ արդյոք աշակերտները ընկալում են դասի էությունը: Այդ նպատակով ուսուցիչը կարող է հանձնարարել վերահսկվող կամ ինքնուրույն գործնական աշխատանքները: Պետք է ասել, որ դասապլաններին ներկայացվող պահանջներն ամենևին էլ չեն նշանակում, որ դրանք խիստ պարտադիր են և տառ առ տառ պետք է մանրամասնեն ուսուցչի անելիքները: Իրականում դրանք ուղեցույցեր են և ուսուցիչն ինքն է որոշում դասարանում իր անելիքները՝ ելնելով սովորողների տարիքային և այլ առանձնահատկություններից: Ուսուցիչը պետք է իր դասապլանում ներառի այն ռազմավարությունը, մեթոդներն ու հնարները, որոնք ըստ նրա անհրաժեշտ են:[4]

Դասի ամբողջ ընթացքը ուսուցիչը բաժանում է մասերի՝ ըստ որոշակի տևողության, հստակ պատկերացնելով, թե յուրաքանչյուր հատված ինչ պետք է բովանդակի: Ըստ այդմ էլ ուսուցիչները դասի ներածական մասին հատկացնում են 5-7 րոպե, հիմնական մասին՝ 20-25 րոպե, երբ հակիրճ ներկայացվում են այն հարցերը, որոնց ուսուցիչը պետք է անդրադառնա դասի ընթացքում, սովորողների դիրքորոշումը դրանց վերաբերյալ, խմբային աշխատանքի անցկացում, իսկ հետո դասն ամփոփել, որի համար հատկացվում է 5-7 րոպե: Կարելի է տնային առաջադրանքի համար ևս հատկացնել 2-3 րոպե: Դասի ընթացքում ուսուցիչը կարող է օգտվել ամենատարբեր մեթոդներից, դա կլինի քարտեզների օգտագործում, գրաֆիկական կազմակերպում, վավերագրերի և փաստաթղթերի հետ աշխատանք թե ուղղորդված ընթերցանություն:[9]

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պայմաններում հանրակրթական դպրոցները հանդիսանում են մարդկության պատմության որակի համար անուղղակիորեն պատասխանատվություն կրող հաստատություններից մեկը: Հանրակրթական դպրոցների գործունեության արդյունավետությունից է կախված ոչ միայն ներկան, այլև մարդկանց ապագան: Ամենևին էլ պատահական չէ, որ զարգացման դրական միտում ունեցող հասարակարգերում չափազանց մեծ է պետության ներդրումների քանակը հանրակրթության բնագավառում, քանի որ համեմատաբար կատարյալ կրթական համակարգերի առկայությունը երաշխիք է դեռահասների ինտելեկտուալ զարգացման և հետագայում այլ երկրների համեմատությամբ սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացած հասարակական հարաբերություններ ունենալու համար: Իհարկե ուսման գործընթացը պետք է ծառայի ոչ միայն գիտելիքների կուտակելուն, այլև սովորողների մոտ համապատասխան հմտություններ և ունակություններ դաստիարակելուն:

Ժամանակակից դասապրոցեսը ոչ միայն պետք է հագեցած լինի գիտատեխնիկական առաջընթացի նորույթներով, այլև այն պետք է ունենա հստակ մշակված նպատակներ, գիտամեթոդական հիմք, ծրագրեր, որոնք, հատկապես ավագ դպրոցի սովորողներին կոգնեն արագ կողմնորոշվել հասարակական բազմաբնույթ հարաբերություններում, ամբողջական պատկերացում ունենալ ինչպես Հայաստանի, այնպես էլ համաշխարհային պատմության, քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային զարգացման հեռանկարի վերաբերյալ: Աշակերտների մոտ պետք է հարգանք ձևավորվի պետության խորհրդանիշերի հանդեպ, պետք է բացառել անտարբերությունը, բարձրացնել ինքնագնահատականը, սեփական անձի և այլոց արժանապատվության գիտակցումը, հայրենասիրության և ազգային ինքնության, ինքնավստահության և այլ գաղափարների դաստիարակումը: Այս տեսանկյունից ժամանակակից սերնդի համար անփոխարինելի դերակատարում ունի ուսուցիչը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ


1. Ա.Նազարյան «Հայոց պատմություն» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ ծրագիր, Երևան 2009թ. (էջ 9)
2. Ա.Մանուկյան «Ուսուցչի մեթոդական ձեռնարկ», Երևան 2005թ. (էջ 5-6)
3. Վ.Դյաչենկո «Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը»
4. Թեմատիկ միավորների ժողովածու ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների և ուսուցչի վերապատրաստողների համար. Երևան 2005թ., (էջ 242, 287-288)
5. Е.Вьяземский Методика преподавания истории в школе, Москва 2002г. (էջ 285)
6. Ю. К. Бабанскин «Рациональная организация учебной деятельности» Москва 1981г. (էջ 92-92)
7. М. А. Холодная Психология интеллекта: парадоксы исследования. Москва 2002г. (էջ 34)
8. М.Студеникин «Современные технологии преподавания истории в школе». Москва 2002г. (էջ 28)
9. М. В. Короткова, М. Т. Студеникин «Практикум по методике преподавания истории в средней школе» (էջ 108):